

ներուն)։ Արեւմտեայց նման հայերէնն ալ տարբրքի մ'անուան սեռական հոլովը կը գործածէ, որով *ossido di potassa* կը լինի քրոտոչ կայտոյ (ուղղ. կալի = *kali*, *potassa*) ; *protossido*, *biossido*, *triossido*, և այլն, և այլն, կը գարձուին համապատասխան յառաջընթաց մասնիկներով նախ, մի, երկ, եռ, և այլն. իսկ այլև և կան կը ներկայացընեն — *oso* և — *ico*, գործիական *ferroso* = երկաթային, *ferrico* = երկաթական։

«Տարբարանական կոչմանց կազմութեան կերպը ցուցնելու համար բաւական կը համարիմ մինչև հիմա մէջ բերածներս, մեծ ցածր հայազգի տարբարեաց համար կարևոր է. բայց այսպի միայն բռնմ որ ուսման գործարանուոր մասին մէջ գտնարութիւնը կ'անին, — *ina* կը վերածուի — իտ վերջաւորութեան, որով կը ձեւանան *chimina* = քիմիկիտ, *morfeina* = մորֆիտ, *narcotina* = թմրիտ, և այլն. քիմիկա այնպէս շինուած է ինչպէս մեր մէջ, մորֆիտ գողցուած է յուսարեն բաղորքէն, թմրիտ թարգմանութիւն է երոպայան կոչման, որովհետև թմրիտ (ուսկից կը ծագի թմրիտ) կը նշանակէ *letargo*.

«Իսկ — *ale* (*acetale*, և այլն) վերջացած բառերը կը փոխուին զուտ հայերէն — ան անցին, զոր օրինակ *clorale* = քլորան, և այլն։ Ինչպէս մեր՝ այսպէս և Հայոց մէջ խժաձայն կը հնչեն վերջաւորութիւնքն *benzone* = կնզրըկոն (կնզրուկ = *benzoine*), և նորա եղբայրակիցները։ Օտարաձայն կ'ընենին անիտէն և անիտոյ, ֆենոլ, և այլն։ Հայ ականջը կը հանդարտի՝ երբ սեփական լեզուով կը լսէ հնչուած ջրածին = *idrogeno* և քրոտածին = *ossigeno* բառերը։

«Իսկ ինչ կերպարանք ատած են արգեօք հայերենի մէջ *monophenylazotetramethyldiamidobenzidine*, և սորա ընկերակիցներն։ — Այս հսկաները վախ կ'ազգեն նաև քաղաքիտ անձանց, և այնքան աւելի՝ որչափ որ իրենց մէջ կը բովանդակեն բազմագործնական ոգիներ, մինչև հարկ պիտի լինի թիչ ատենէն տպագրական էջերը լայնցընել և երկընցընել, որպէս զի այս կարգի բաներէն մէկ բանին հանգիստ կերպով կարե-

նան ընկողմանիւ։ Հ. Քաջունին բնաւ ուշադրութիւն չի գարձընէր այս տեսակ անուանց, որոնք վայրենի լինելով՝ ոչ իշխող ունին իրենց վրայ և ոչ օրէնք, և կրնան հետեւարար ինքնակոչ գնալ Հայաստան, և կամ գոցէ թուականով մը (թուական գրութեամբ տարբարանական անուանց) զոհ լինին, նման պահողկի մէջ իջեանող օտարականաց»։

Հմուտ լեզուագէտն իր այս խօսքերը և բովանդակ ճառախօսութիւնը կ'աւարտէ գովեստիք Հ. Մ. Քաջունոյ տարբարանական անոտանկոչութեան շատ յաջող կազմութեան համար, յիշեցրնելով նաև որ շատ պատշաճ կերպով՝ քան զինքն հնադրններէն գործածուած քիմիական արտեւտ, քիմիկա գործոտրիան, քիմիկականոտրիան, բնաչոտոտրիան, տարբարոտոտրիան, անձիչ բառերը մէկդի թողլով, տարբրաց գիտութիւնը լաւագոյն մկրտեք է տարբարանոտրիան անուամբ, թէպէտ և ինքն տարբարանոտրիան բառը ճշգրտոյն թարգման կը համարի մտաց զազափարին։

Բ Ա Ն Ա Ս Ե Բ



Ո Թ Ո Ն Բ Ի Զ Մ Ա Ր Ք Բ

ԹՄ. 1815, Ապրիլ 1. — մ. 1898, Յուլիս 30

Գ Ե Ր Մ Ա Ն Ա Ս Ե Բ Զ Ա Ս Ա Ր Մ Ե Ա Ս Ա Ս Ե

Կ Ա Ս Ս Ե Բ

Գ Ո Ւ Լ Ի Է Լ Մ Ա Ս Ա Ջ Ն Ո Յ



1815 — 1898

Հ ս կ այ

Գ Ա Ղ Ա Ք Ա Գ Ե Տ

օժտուած բարեբաւասիկ կեանքով.

Բարձր

մարմնով, մտքով, իշխանութեամբ
արհամարհեց ժողովրդականութիւնս .

Յարմանակ

մտքի, կամաց եւ ուժոյ
ընդդէմ իրաւանց եւ արդարութեան

պսակաւորեալ
արինսզանգ դափնիներով

Ե Ն Ե Ա Լ

ի խաբէական աւուր

ի ա ղ ա ղ գ ի ւ ղ ի մ է ջ

խաղաղ ժամանակի, տան եւ տէրութեան

« Հրատարակեց * »

« երեք արիւնարբու պատերազմներ »

« զոհեց »

« Բագարաւոր ծովորք, եղբարք, քոյրեր և հարսեր »

« եւ այս ամէն բանէն »

« չզգաց ընաւ ուրախութիւն »

« այլ կրեց »

« տիանութիւններ, վշտեր, աշխատութիւններ »

1830—1850

Ա Շ Ա Կ Ե Ր Տ

Փօստինգայի, Բեռլինի, Գրայֆսուալդի

համալսարանաց

գրգռիչ ընաւորութեամբ

խրոխտ եւ ժպիրի ընդդէմ ուսուցչաց .

Մ Ղ Ե ց

երեսուն եւ երկու մենամարտներ

ուսումնակցաց դէմ .

Սիրեց եւ իւր հետ շղջեցուց շներ .

Դատապարտուած

ապաշխարեց քանի մ'օր

բանտի մէջ

Ս Ե Ր Ո Ի Ն Դ

սլաւական ազնուազարմ հաղուստ

կոմսերու տոհմի .

Պ ս ա կ աւ ո թ ե ա լ

Յ Օ Ր Է Ն Ս Գ Ի Տ Ո Ի Թ Ե Ա Ն

մէկդի Թողլով

ծեռք զարկաւ զէնքի

գրուեցաւ

Թեթեւագէն հետեւակ վաշտի

Ջ Ի Ն Ո Ի Ո Ր

* Ձակերտի մէջ շրուածներն են ինքնին Իիշ-
մարքի խօսքերը՝ գրուցատրութեան մի ժամա-
նակ :

1851—1870

Պ Ա Շ Տ Օ Ն Ե Ա Յ Պ Ե Տ Ո Ւ Ք Ե Ա Ն

սիրեց եւ փառաւորեց մեծապէս

իւր հայրենիքը Գերմանիան .

Ատեց եւ նուաստացուց սաստկապէս

իւր նախաննորդն Աւստրիան .

Դ Ե Ս Պ Ա Ն

ի Պ Ե Տ Ր Բ Ո Ւ Դ Գ Ե Ի Ի Պ Ա Ր Ի Զ

կշռեց մտօք երկու մեծ ժողովուրդներ

Գ Ա Հ Ե Ր Է Ց

Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ա Յ Ժ Ո Ղ Ո Վ Ո Յ Ն

զինուորանոց դարձուց ամբողջ Քրուսիան

կազմեց

մնայուն եւ հզօր բանակներ .

Օգտուեցաւ իւր նախաննորդին զօրութենէն

Դ Ա Ն Ի Մ Ա Ր Ք Ա Յ Ի Դ Ե Մ

Որսը բաժնետրվ

խլեց երկու գաւառներ

իբրեւ մասն առիւծին .

Դ Ա Շ Ն Ա Կ Ց Ե Ց Զ Ի Տ Ա Լ Ի Ա

երկու սուրերու մէջ

մահացու վիրաւորեց զԱւստրիա

Ի Ս Ա Դ Ո Վ Ա

Վտարեց զմա գերմանական դաշնակցութենէն

լուծեց հին կայսրութիւն մը

նորը վերակազմելու համար .

Քարճուցաւ

գահերէց դաշնակցաց խորհրդարանին

հնչեց պատմութեան մէջ

համբաւն ու կոչումն

« Ե Ր Կ Ա Ք Ե Ա Յ Դ Ի Ի Ա Ն Ա Դ Պ Ի Ն »

1870—1871

Գ Ր Գ Ռ Ե Ց

յատելութիւն եւ ի պատերազմն

խարդախ հնարիւք եւ սոււա հեռագրաւ

երկու խաղաղ ազգեր .

Անձամբ առաջնորդեց ի բանակին

ոչընչացուց դրացի մը

իւր տունը կանգնելու համար .

Անգուժ, անխիղճ, անտեղիտալի

զինուածի եւ զօրաւորի հետ

կոտորեց նաեւ անգէնն ու տկարը .

Մը միակ դրօշի ներքեւ

Գ Ե Ր Մ Ա Ն Ա Կ Ա Ն Կ Ա Յ Ս Ր Ո Ւ Ք Ե Ա Ն

հաւաքեց, ամրապնդեց, ձուլեց

քառասուն միլիոն ժողովրդեան

հասարակաց հայրենիքը

Ի Վ Է Ր Ս Ա Յ Լ

իւր սիրելի վեհապետին ծայրագոյն փառաց

ծայրագոյն յարժանակ կանգնեց

1872—1878

Անսահման պատիւք

խանդավառ անվերջ կեցցէներ

փառաշուք տխտղոմներ

Յաղկունք եւ Յիօհաղք

ըմեղկեցին իւր կորովը .

Ուժոյ ծայրն հասած դարձեալ միցեցաւ

աքսորեց կրճաւորներ

հալածեց եւ ընտեց եպիսկոպոմներ

արհամարհեց իւր կենաց դէմ անյաջող դաւեր

կռուեցաւ ոգւոյն բոլոր զօրութեամբ

ընկերավարչաց դէմ՝

չկրցաւ յաղթել ոչ առաջնոց եւ ոչ վերջնոց

1878—1890

ԲԵՌԼԻՆԻ

ՎԵՀԱԺՈՂՈՎԻՆ ՄԷՋ

հիմն դրաւ եռապետ դաշնակցութեան՝

ԳԵՐՄԱՆԻՈՅ—ԱՒՍՏՐԻՈՅ—ԻՏԱԼԻՈՅ

ազատ մնալու

գաղղիական փոխադարձ վրիժառուութենէն

Տեսաւ դժկամակ բայց անխուով

հակադարձ դաշնակցութիւն երկուց պետութեանց

ԳԱՂՂԻՈՅ ԵՒ ՌՈՒՍԻՈՅ

1890—1898

Ի Ի Ր Ա Ս Տ Ղ Ը

խոնարհեցաւ

կորսնցուց իւր փայլը

աւփոփեց յետին նշոյլներն

շքեղ միայնաբանի մը մէջ .

Անգամ մ'ալ դըռուատեցաւ

ՈՒԹՍՆԱՄԵԱՅ ՀՍԿԱՅՆ

որ քարասիրտ հեզնութեամբ

կոպտաբար մախատեց և լացուց թշուառներ

որոց արտասուքը

մարդասիրութեան թաշկինակով

կը սրբէր

Գ Լ Ա Դ Ս Տ Ո Ն

Կանգնեցաւ

Ի Ի Ր Դ Ա Մ Բ Ա Ր Ա Ն Ն

անցեալ եւ ապագայ պատմութեան

սպհմանագլուխը

լեառն Գարիգին

գերմանական ժողովրդեան

ՕՐ Հ Ն ՈՒԹԵԱՆԾ .

լեառն Գեբաղ

հեծեծամուռնչ մարդկութեան

Ա Ն Ի Մ Ի Ց
